«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 7. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող 7.2-րդ հոդվածի, որոնք ուժի մեջ են մտնում Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքի ուժով, որպես ինքնավար մարմին, հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրվանից հետո՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի հունիսի 30-ը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ սույն օրենքով սահմանված կարգով նշանակում է հանձնաժողովի նախագահին և չորս անդամներին պաշտոնավարման հետևյալ ժամկետներով՝

1) հանձնաժողովի նախագահ՝ 5 տարի.
2) հանձնաժողովի անդամ՝ 4 տարի.
3) հանձնաժողովի անդամ՝ 3 տարի.
4) հանձնաժողովի անդամ՝ 2 տարի.
5) հանձնաժողովի անդամ՝ 1 տարի:

3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի այն անդամները, որոնք նշանակվել են մինչև Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը, շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ օրենքով սահմանված ժամկետի ավարտը, բայց ոչ ավելի, քան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նշանակումները կատարելը, մասնավորապես՝

1) հանձնաժողովի գործող նախագահը՝ մինչև հանձնաժողովի նոր նախագահի նշանակումը.

2) հանձնաժողովի յուրաքանչյուր նոր անդամի նշանակմամբ դադարում են հանձնաժողովի գործող չորս անդամներից այն անդամի լիազորությունները, որը մյուս անդամներից ավելի շուտ է նշանակվել: Հանձնաժողովի գործող անդամի լիազորությունները դադարում են նաև այն դեպքում, եթե նա սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նշանակվել է հանձնաժողովի նախագահ կամ հանձնաժողովի անդամ:

Deleted: մեկ տարվա ընթացքում